Արձանագրություն N3
<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 սեպտեմբերի 2017թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Մխիթարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Օհանջանյանը, Ս. Նազարյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ն>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության քննարկման արդյունքները:

2. Գնահատման արդյունքների ամփոփման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ն>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայցվել է 08.09.2017թ.:

12.09.2017թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը:

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկների ադյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Չափաբաժին 1 - ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի հեղեղատարի հունի մաքրման, ափերի վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Մասնակից՝ <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից:

Չափաբաժին 2 - ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի տարածքում Արաքս գետի ափի սահմանային 38/3-39 նշանների շուրջ 50 մ երկարությամբ հատվածում ողողված սահմանային ճանապարհի քարալիցքային ամրակապման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Մասնակից՝ <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

Ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Է. Մխիթարյան

Անդամներ ---------- Վ. Օհանջանյան

---------- Ս. Նազարյան

---------- Հ. Սիրունյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան